ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

# ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐԸ ՍՅՈՒՆՅԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ

*Հոդվածում ներկայացված է Սյունիքի գիտական կենտրոնների և հատկապես Տաթևի վանքի ուսումնական ավանդների փոխանցականության ընթացքը միջնադարում:*

*Այն միտքն է ընդգծված, որ այստեղ գրված աշխատությունները՝ լինեն փիլիսոփայական, բնագիտական և թե անտիկ աշխարհի փիլիսոփաների երկեր, ունեցել են շեշտված ուսումնական ուղղվածություն: Դրանք կարելի է դասել միջնադարյան Հայաստանի ուսումնական ձեռնարկների շարքը:*

*Ասվածը հաստատելու համար օրինակներ են բերվում Տաթևյան դպրոցի սաների՝ իրենց ուսուցիչներին տրված բնորոշումներից, ինչպես նաև Գրիգոր Տաթևացու գործերի հրատարակությունների առաջաբաններից ու հիշատակարաններից (կոլոֆոններ):*

*Կատարվող մեջբերումներում ցույց է տրվում, որ դրանք բոլորն էլ ծառայել են դասավանդմանը, ինչի համար Տաթևացին խոսքը շարունակ ուղղում է իր սաներին՝ նկատի ունենալով նաև հաջորդող դարերի ընթերցողներին:*

***Բանալի բառեր՝*** *Տաթև, Սյունիք, դպրոց, քարոզ, Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, ուսումնական մեթոդ, մանկավարժական ձեռնարկ:*

Սյունիքը կրթական կենտրոն է եղել՝ սկսած հայոց գրերի արարման շրջանից: Ինչպես գրում է Կորյունը, Մաշտոցը աշակերտներ է ժողովել նաև Սյունիքից, միաժամանակ այնտեղ ևս կազմակերպել նորաստեղծ գրերով ուսուցման գործը[1]:

Սյունյաց երկրորդ ուսումնական կենտրոնը, որը հիշվում է պատմական սկզբնաղբյուրներում, գտնվել է Սյունիքի Ծղուկ գավառի Շաղատ բնակավայրում, որը մայրաքաղաք է անվանում Ստեփաննոս Օրբելյանը: Պատմիչը գրում է, որ Շաղատում ուսուցիչներ ու վարդապետներ էին պատրաստում[2]:

Նկատի ունենալով Շաղատի ու այլ վայրերի վանական կենտրոնների դպրանոցները՝ 9-15-րդ դարերի հայ դպրոցի ու մանկավարժության պատմությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ Աբգար Մովսիսյանը գրում է. «7-րդ դարը հայ դպրոցի և մանկավարժության պատմության մեջ մի առանձին փայլ չէր ունենա, եթե չլինեին Սյունյաց դպրոցները, որոնց գլուխ էր կանգնած հոգևոր բարձր տիպի դպրոց-վարդապետարանը»[3]:

Ասվածի հաստատումն են մի շարք ուսուցիչ վարդապետների կրած Սյունեցի անվանումը, ինչպես, օրինակ, Ստեփանոս Սյունեցի առաջինը, որ եղել է Մաշտոցի աշակերտներից, ապա հաջորդ՝ վեցերորդ դարում՝ Պետրոս Սյունեցին:

Սյունեցի ուսուցիչ-վարդապետների բարձրակետն է դառնում 8-րդ դարի նշանավոր մատենագիր և ուսուցիչ վարդապետ Ստեփանոս Սյունեցին, որ

1 **Կորյուն**, Վարք Մաշտոցի, աշխ. Մ. Աբեղյան, Երևան, 1980, էջ190:
2 **Օրբելյան Ս.**, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1912, էջ 148:
3 **Մովսիսյան Ա.**, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության, Երևան 1958, էջ 87:

նահատակվել է 735 թ.: Նրա գրած Ավետարանի և մյուս մեկնությունները բացատրվում են նաև մանկավարժական գործունեությամբ, քանի որ միջնադարյան մեկնությունները, ինչպես բառը հուշում է, ունեին նաև ուսումնա-բացատրական նպատակ:

Սյունյաց ուսումնական կենտրոնները միայն տեղային՝ նահանգա-թեմական ընդգրկում չեն ունեցել, այլև համահայկական: Ասվածի բնորոշ օրինակն է Տաթևի վանքի և նրան կից վարդապետարանի հիմնումը: Վանքի օծմանը և վարդապետարանի բացմանը, ինչպես գրում է Ստեփանոս Օրբելյանը, մասնակցել են Հայաստանի ու Աղվանքի բարձրաստիճան հոգևորականներ և Բագրատունյաց Սմբատ ու Վասպուրականի Գագիկ Ա Արծրունի թագավորներն իրենց շքախմբերով[1]:

Ինչպես գրում է Լևոն Խաչերյանը, առաջին շրջանում՝ 10-13-րդ դարերում, Տաթևի ուսումնական կենտրոնը հանդես է եկել որպես վարդապետական կենտրոն, իսկ 1345-1415 թթ.՝ որպես համալսարանական կենտրոն[2]:

Օրբելյանը գրում է, որ Տաթևի վանական կենտրոնում մինչև 500 միաբան ու սան է եղել:

Հովհան Որոտնեցին Գլաձորում սկսում է դասավանդել իր ուսուցչի՝ Եսայի Նշեցու վախճանվելուց հետո: Այնուհետև փոխադրվում է Տաթևի վանք, որտեղ «ժողովեաց առ ինքն զբազում աշակերտս յամենայն գաւառաց եւ լուսազարդեալ պայծառացոյց զազգն հայոց վարդապետօք եւ քահանայիւք, գեղեցիկ կարգաւորութեամբ և ուղղափառ դաւանութեամբ»[3]:

Որոտնեցու, որպես հմուտ գիտնականի ու աստվածաբանի, ինչպես նաև կրթական գործունեությամբ լույս տարածելը նկատի ունենալով՝ նրա աշակերտ Թովմաս Մեծոփեցին ուսուցչի վախճանվելու կապակցությամբ գրում է. «Խաւարումն եղեւ աշխարհիս հայոց»[4]:

Տաթևի վանքը մի նոր փայլ է ստանում Հովհան Որոտնեցու ու Գրիգոր Տաթևացու շնորհիվ, որոնք նաև ուսուցիչ-վարդապետ ու աշակերտ գործակցության անկրկնելի օրինակ են ներկայացնում՝ սկսած Տաթևացու՝ Որոտնեցուն ուսանելուց, վարդապետական գավազան ստանալուց մինչև Կիլիկիայի սրբավայրերն ու Երուսաղեմ ուխտի գնալը, ապա և միասնաբար դասավանդելը:

1360 թ. Տաթևի համալսարան Որոտնեցուն ուսանելու է գալիս 14-ամյա Տաթևացին և նրա մոտ ուսանում 28 տարի՝ մինչև Ուսուցչապետի վախճանվելը: Տաթևացին Որոտնեցու մասին գրելիս նշում է ուսուցչին բնորոշ երկու հատկանիշ, որ Որոտնեցին աշակերտներին նայում էր քաղցր դեմքով, զվարթամիտ էր և ողորմած. «Քաղցր դիմօք, մեծահասակ եւ բարետեսիլ, զուարթամիտ եւ ողորմած», «գեղեցիկ տեսլեամբ առ որդիս մարդկան կերպացեալ»: Հատկանիշներ, որոնք դրական ազդեցություն են ունենում աշակերտների վրա:

Ինչպես նշում է Լ. Խաչերյանը, Որոտնեցին Տաթևացու կողմից «բնութագր-

1 **Օրբելյան Ս.**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 149:

2 **Խաչերեան Լ. Գ.**, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները, Լիզպոն, 1998, հտ 1-ին, էջ 327:

3 **Կորյուն**, Վարք Մաշտոցի, աշխ. Մ. Աբեղյան, Երևան, 1980, էջ190:

4 **Օրբելյան Ս.**, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1912, էջ 148:

ւում է համահայաստանեան ընդգրկմամբ» և բերում է հետևյալ բնորոշումները. «Երանելի Վարժապետն հայոց», «Լուսաւոր Վարժապետ հանուրց»[1]:

Որպես մանկավարժ՝ նույն ձևով Տաթևացին է բնորոշվել Տաթևի դպրոցի սաների կողմից: Առաքել Սյունեցին Տաթևացուն որպես ուսուցիչ լինելով հանդերձ հանապազ ուսանելու մասին գրում է՝ դիմելով գիշերվա՝ որպես ուսանելու և ցերեկվա՝ որպես աշակերտներին ուսուցանելու պատկերին: Ասում է, որ գիշերը «ի հայրաբուղխ աղբերէն ըմպէր և ի տուընջեան զծարաւեալսն արբուցանէր»: Այսինքն՝ գիշերն ընթերցում էր եկեղեցու հայրերի գրածները և ցերեկները դրանք ուսուցանում աշակերտներին: Նրանք, ովքեր գալիս էին Տաթևացուն ուսանելու, նախ՝ նրա արտաքինով էին ուրախանում և ապա՝ խոսքի քաղցրությամբ: Նախ աստվածային տեսքով էին հիանում և ապա հրեղեն խոսքերով[2]:

Մեսրոպ վարդապետը Տաթևացու հիշատակին ասված ներբողյանում ընդգծում է նրա՝ ուսուցիչ և իր՝ աշակերտ լինելը: Տաթևացու միջոցով ներկայացնում է ուսուցչի հավաքական կերպարը, իսկ իր ու իր ուսումնակիցներին որպես աշակերտ և ապա՝ քարոզիչ վարդապետ դառնալը.

**Վարդապետաց ցեղին Հայկա ուսուցիչ,**
**Զի և բանիւ քոյին լինիմք քարոզիչ[3]:**

Հովհան Որոտնեցու, նրա աշակերտ Գրիգոր Տաթևացու և վերջինիս աշակերտներով Տաթևի համալսարանի շարունակականության ըմբռնումն իր արտահայտությունն է գտել նաև միջնադարյան մանրանկարներում ու տպագիր գրքերի փորագրանկարներում:

Մանրանկարներում Որոտնեցին պատկերվում է գահին նստած՝ որպես վարդապետ քարոզիչ, իսկ Տաթևացին՝ նրա դիմաց խոնարհ կանգնած կամ ծնկած:

Տաթևացու «Ոսկեփորիկում» կամ «Հարցմանց գրքերում» եղած փորագրապատկերներում այդ մոտիվն ավելի է զարգացվում, և Որոտնեցու դիմաց խոնարհությամբ կանգնած Տաթևացին արդեն պատկերվում է՝ շրջապատված իր աշակերտներով: Բոլոր պատկերներում ընդգծված է վարդապետի՝ ուսուցչի ձեռքի գավազանը, որը խորհրդանշում է վարդապետական իշխանությունն ու գիտելիքների փոխանցումը աշակերտներին:

Որոտնեցու մեկ այլ աշակերտ Մելքիսեդ ուսումնականը նրա մանկավարժական գործունեությունը դարձյալ համեմատելով լույսի ծավալման հետ՝ գրում է. «Ի դառնութեան ժամանակիս լոյս ծագեաց մթացեալ եւ խաւարեալ ազգիս՝ զմեծ Վարժապետն մանկանց, զՐաբունապետն վարդապետաց, զՅովհաննէս վարդապետ Որոտնեցի»: Շարունակելով, նրա մանկավարժական գործունեությունը հետևյալ խոսքերով է բնորոշում. «Որ սնուցաներ զմանկունս, ջամբելով զկերակուրն կենաց հոգւոց, զհանգիստ մարմնաւոր պիտոյից»[4]:

Նկատի ունենալով Որոտնեցու և Տաթևացու աշակերտների կողմից նրանց լույսի ճրագի հետ համեմատելը, ինչպես նաև Տաթևի վանքի ծավալած գործու-

1 **Մովսիսյան Ա.**, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության, Երևան 1958, էջ 87:

2 **Օրբելյան Ս.**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 149:

3 **Խաչերեան Լ. Թ.**, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները, Լիզպոն, 1998, հտ 1-ին, էջ 327:

4 **Թ. Մեծոփեցի**, Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց, էջ 60:

նեությունը՝ Հ. Գ. Զարպհանալյանը գրում է. «Ճրագ մ՚ էր այդ անկման շրջանին, ընդհանուր և համատարած մթութեան ու խաւարի մէջ»[1]

Նկատի ունենալով ճեմելով դասավանդելու անտիկ համալսարանների արիստոտելյան մեթոդը՝ Մելիքսեդը գրում է. «Շրջէր վեհացեալ համալսարանին իբր զհսկայ վերնական գնդին, բոլոր կամարին»[2]:

Այնուհետև Տաթևացու հռչակի մեծացմանը զուգընթաց, նա առանձին է պատկերվում՝ հենված քարոզության խորհրդանիշ վարդապետական գավազանին և շրջապատված աշակերտներով:

Որոտնեցու և Տաթևացու գործերի մեծ մասը ևս պայմանավորված է նրանց ուսումնական գործունեությամբ: Որոտնեցին իր հեղինակած փիլիսոփայական և տրամաբանական երկերի զգալի մասը որպես ամենամյա դասախոսություններ է կարդացել, որոնք փրկվել և մեզ են հասել շնորհիվ Գրիգոր Տաթևացու կողմից գրառվելու:

Որոտնեցին, որ ոչ թե միայն գիտական աշխատանքներ է գրել, այլև դրանք համապատասխանեցրել դասավանդմանը, երևում է այն բանից, որ նա ըստ հարցերի և ենթավերնագրերի, կարծես ըստ դասընթացի, հնարավորինս տրոհել է նյութը թեմա առ թեմա: Ավելին, ինչպես նշում է Ա. Մովսիսյանը, նրա գործերի մեզ հասած ձեռագրային ընդօրինակություններում անգամ նկատելի է, որ դրանք որպես դասախոսություն են կարդացվել. «Որոտնեցու որոշ գրվածքներ կարծես թե նրա դասախոսությունների սղագրությունները լինեն: Հաճախ նա դիմում է իր ունկնդիրներին՝ ասելով «եթե պարզ չէ, ասեմ ավելի պարզը, եթե դժվար է հիշել ամբողջը, ապա նախ հիշեք այս և այն, ապա հետո սրանք»»[3]:

Որոտնեցու և Տաթևացու գործերի վերնագրերում գերակշռող «Լուծմունք բանից» և «Մեկնութիւն» սկսվածքներով աշխատությունները, նվիրված լինելով անտիկ հեղինակների և եկեղեցու հայրերի երկերի բացատրություններին, նույն ուսումնական նպատակներն են հետապնդել՝ անտիկ հեղինակների և եկեղեցու հայերի երկերը, ինչպես նաև Աստվածաշնչի տարբեր գրքերը մատչելիորեն բացատրել աշակերտներին՝ դասավանդման ընթացքում:

Տարիքային տարբեր խմբերի և ուսումնական տարբեր աստիճանների համար միևնույն թեման տարբերակված երեք աստիճաններով ներկայացնելու բնորոշ օրինակն են Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ», «Գիրք հարցմանց» և Քարոզգրքի «Ձմեռան» և «Ամառան» հատորները, որոնցից առաջինը միևնույն հարցի մասին գրում է պարզ և համառոտ ոճով, «Հարցմանց գրքում»՝ ավելի ընդարձակ և որոշակիորեն բարդ ձևով և, վերջապես, տվյալ հարցի և հասկացության մասին սպառիչ և ավարտուն ձևով է գրում «Քարոզգրքի» երկու հատորներում:

Երեք գործերում էլ նա օգտագործում է հարցերը խմբերի և խմբերից յուրաքանչյուրը կետերով իրար հետևից թվարկելու մեթոդը, որը հայտնի է որպես սխոլաստ (սքուլ) դպրոցական մեթոդ:

Այս երեք գրքերի ուսումնական ուղղվածությունը երևում է Տաթևացու հիշյալ գրքերի համար գրած մուտքի խոսքերից և հրատարակությունների առաջաբաններից և վերջաբան հիշատակարաններից:

1 Նույն տեղում:
2 Նույն տեղում:
3 **Մովսիսյան Ա.**, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, էջ 124:

«Ոսկեփորիկի» հրատարակության առաջաբանում ասվում է, որ այն Ոսկեփորիկ է կոչվում, որովհետև գիրքն իր փորում, այսինքն՝ կազմից ներս ունի ազնիվ ոսկի: «Ոսկեփորիկը» Տաթևացին գրել է Մասուրշահի խնդրանքով:

Գրքի հիշատակարանում Տաթևացին գրում է, որ «այս մի քիչ աստվածաբանությունը որ հավաքեցի Սուրբ Գրքից, ընծայում եմ քեզ (Մասուրշահին) որպես հոգևոր գանձ»:

Մասուրշահին, ում պատվերով գրել է «Ոսկեփորիկը», խրատական այնպիսի խոսքեր է ասում, որոնք վերաբերում են ընդհանրապես բոլոր աշակերտներին: Առաջին՝ նախ միշտ աշխատասեր պետք է լինել մտքով: Երբեք չպետք է ձանձրանալ այս գիրքն ընթերցելուց: Հարաժամ պետք է կարդալ, այսինքն՝ սերտել[1]:

Դժվարալույծ, դժվար մեկնաբանվող հատվածները թող հարցնի, որը նշանակում է աշակերտի չհասկացած նյութը. ուսուցչին հարցնելը: Ոչ միայն սովորի, այլև ուրիշներին սովորեցնի, որը գիտելիքների փոխանցականությունն է:

Պատահական չէ շարունակ «այլ դու որդյակ» խոսքերով դիմելը, ինչպես որ աշխարհական միջավայրում ուսուցիչն էր դիմում աշակերտին:

Ուսումնական նույն ուղղվածությամբ «Հարցմանց գրքի» առաջաբանում Տաթևացին ասում է, որ այս գիրքը գրել է «բազում անգամ իր աշակերտների խնդրելուց հետո»: Տեսնելով, որ չի կարող մերժել իր սաներին, ձեռնամուխ է լինում «Հարցմանց գրքի» գրությանը: Հետևյալ կարևոր տեղեկությունն է հաղորդում: Ասում է. «Որովհետև իմ աշխատությունը միայն ներկայում լսելու համար էր, ուստի հոգ տարա, որ հաջորդների կողմից գրչով ավանդվի»: Սա նշանակում է, որ «Հարցմանց գիրքը, որպես աստվածաբանական տարբեր հարցերի պատասխաններ պարունակող ժողովածու, դասընթացի ձևով բանավոր կարդացվել է՝ տրվող հարցին իր իսկ կողմից հաջորդող պատասխանով[2]: Ինչպես որ Տաթևացին գրառել էր Որոտնեցու դասախոսությունները, այնպես ինքը կամ իր աշակերտները գրառում և ձեռնարկի են վերածում «Հարցմանց գիրքը», որպեսզի ոչ միայն իրենք լսեն, այլև գրով հաջորդներին ավանդվի:

Գրքի վերջաբան հիշատակարանում ասում է, որ «բացայայտեցի զբանս հարցմանց ի լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցւոյ»: Հետևաբար նա մեկնություններ է գրել եկեղեցու տարբեր հայրերի աստվածաբանական բացատրությունների դժվարընկալելի հատվածների համար:

«Հարցմանց գիրքն» ավարտել է «ընդ հովանեաւ երկնահանգէտ մեծագով ուխտի Սիւնեաց նահանգի առաքելական աթոռոյ Սուրբ առաքելոյս և այլ շրջակայ հրեշտակաբնակ Սուրբ Մենաստանեայց»: Տաթևի կողքին շրջակա վանական միաբանությունների հիշատակումը ցույց է տալիս, որ Տաթևը ուսումնագիտական կենտրոն է եղել Սյունիքի վանական մյուս միաբանությունների համար ևս:

Անդրադառնալով այն հարցին, թե մեթոդական ինչ սկզբունքով է գրել «Հարցմանց գիրքը»՝ հարցերը և վերջիններիս հաջորդող պատասխանները, հետևյալ բացատրությունն է տալիս. «Ոչ ամենևին օտարաձայն աւելորդս խօսեալ և ոչ գեղջուկ իմն աշխարհական խօսից յարմարեալ: Այլ զպիտանիս եկե-

1 **Գ. Տաթևացի**, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, Կ. Պոլիս, 1746, էջ 573-574:
2 **Գ. Տաթևացի**, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, էջ 5:

ղեցւոյ և վարդապետաց ոգէշահ խնդիր հաւատոյ միայն հոգ տարեալ»[1]: Նման մոտեցմամբ ոչ օտար մեկնաբանություններին է շատ տեղ տվել և ոչ էլ պարզ ժողովրդական բացատրություններին, այլ ընտրել է միջին տարբերակը՝ եկեղեցու համար անհրաժեշտը և վարդապետների՝ ի խնդիր հավատո ասված խոսքերն է ընտրել: Հոգեշահ խոսքեր բնորոշմամբ նկատի ունի, որ «Հարցմանց գիրքը» որպես ուսումնական ձեռնարկ բացատրությամբ և ոչ խրթին աստվածաբանական մեկնությամբ է շարադրել:

Այս գրքի՝ Կ. Պոլսի 1749թ. հրատարակության տպագրողը այնքան է կարևորել այն, որ բարեգործության առանձին տեսակ է համարում գրքերի տպագրությունը:

Ձմեռան հատորի սկզբում Տաթևացու քարոզների որպես բնորոշում ասվում է, որ դրանք են խրատական խոսքեր հոգեշահ բովանդակությամբ ի գիտություն չիմացողների: Այս խոսքերը ցույց են տալիս, որ Տաթևացին ոչ թե միայն աստվածաբանական վերլուծություն է կատարել, այլև այդ վերլուծությունը ներկայացրել ուսումնական ձևի մեջ:

«Քարոզգրքի» երկու հատորների կազմման երեք պատճառ է նշում.

***Առաջին:*** Ինչպես «Ոսկեփորիկի» և «Հարցմանց գրքի» դեպքում էր, «հարկեցեալ զեղբարց համաշունչ աշակերտաց»՝ աշակերտների խնդրանքով:

***Երկրորդ:*** Համաբնույթ գիրք չկար դասավանդելու համար: Հետևաբար որպես ուսումնական ձեռնարկ է գրվել և ծառայել:

***Երրորդ:*** Չի կարողացել բոլորին քարոզել, որի համար «հնարեցայ զգիրս քարոզաց»:

Վերջին բացատրությունը գալիս է կրկին հաստատելու, որ որպես դասավանդությունների շարք են կարդացվել այս քարոզները, ապա գրի առնվել[2]:

Որևէ գիտակարգի կամ հասկացության մասին ուսումնա-բացատրական եղանակով գրելու սկզբունքը այնուհետև փոխանցվեց Տաթևի դպրոցի սաներ, ապա և Տաթևի համալսարանում ռաբունապետի աստիճանում Տաթևացուն փոխարինած Մատթեոս Ջուղայեցուն և Առաքել Սյունեցուն, ովքեր նաև Տաթևացու աշակերտներն էին, փիլիսոփայական և մեկնաբանական գործերին:

Այն հատկապես ցայտուն է երևում Մատթեոս Ջուղայեցու «Հարց և պատասխանիի» ձևով գրված Ավետարանական մեկնությունում և Առաքել Սյունեցու նաև ակնհայտ ուսումնական ուղղվածություն ունեցող «Մեկնութիւն քերականի» աշխատության մեջ[3]:

Ուսումնական նույն նպատակով է, որ այս շրջանում մեծ տարածում են գտնում «Հարցումն և պատասխանի» անվանվող ձեռնարկ-աշխատանքները՝ նվիրված գիտության և աստվածաբանության տարբեր բնագավառներին:

Պատահական չէ, որ 17-րդ դարի հայ հոգևոր - մտավոր վերածնությունը ևս սկզբնավորվում է Սյունիքից, ուր գնում են Սարգիս եպիսկոպոսը և Տեր Կիրակոսը և այնտեղ նոր կյանք են հաղորդում Սյունյաց մեծ անապատին:

Տեղի ընտրությունը պատահական չէր, այլ հիմնված էր Սյունիքի վանական ուսումնական կենտրոնների անցյալի ավանդույթի վրա: Ինչպես գրում է

1 Նույն տեղում, էջ 772-773:

2 **Գ. Տաթևացի**, Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 720:

3 Տե՛ս **Առաքել Սյունեցի**, Յաղագս քերականութեան համառօտ լուծմունք, Լոս-Անճելոս, 1982, 236 էջ:

Առաքել Դավրիժեցին՝ «Բայց որոնում էին խաղաղ, պատշաճավոր անապատի տեղ՝ հեռու աշխարհային պղտորումներից: Եվ լսելով իմացող մարդկանցից, թե այդպիսի տեղեր շատ կան Հայաստանի արևմտյան մասում, մանավանդ Սյունյաց երկրում. հին ժամանակներից անապատ է եղել այդ երկրում, որի տեղերը այժմ էլ երևում են»[1]:

Սյունիքի դպրոցի ուսումնական մեթոդները, որոնք արտահայտվել են այնտեղ դասավանդած գիտնական-հոգևորականների գրած ուսումնական ուղղվածությամբ աշխատություններում, այնուհետև կիրառվելու էին 17-18-րդ դարերի անցումային շրջանում, ապա և 19-րդ դարի հայ վանական կենտրոնների ժառանգավորաց վարժարաններում ու ճեմարաններում:

**ВОПРОСЫ ПРЕПОДАВАНИЯ В ШКОЛАХ СЮНИКА - КРИСТИНЕ МЕЛКУМЯН -** В статье представлен процесс преемственности учебных традиций научных центров Сюника, в особенности Татевского монастыря в средние века.

Выделена мысль о том, что труды, написанные здесь, будь они философскими, естественнонаучными или же толкованиями сочинений философов античности, всегда обладали подчеркнутой обучающей направленностью. Их можно возвести в ряд учебных пособий средневековой Армении.

Для подтверждения этой мысли приводятся примеры из характеристик учащихся Татевской школы о своих учителях, а также из предисловий опубликованных трудов Григора Татеваци и дневников-колофонов.

В приведенных выдержках и цитатах показано, что все они служили процессу обучения, собственно, почему и Григор Татевоци постоянно обращается к своим ученикам, имея в виду также читателей будущих столетий.

***Ключевые слова:*** Татев, Сюник, школа, проповедь, Ован Воротнеци, Григор Татеваци, обучающий метод, педагогическое пособие.

**THE QUESTIONS OF TEACHING IN THE SCHOOLS OF SYUNIK - KRISTINE MELKUMYAN -** In the article is presented the scientific centers of Syunik, especially the process of transmission of educational traditions in the monastery of Tatev in the medieval period.

The article underlines the idea that the medieval works written in this area have had philosophical and natural-scientific origin and the interpretations of the ancient philosophers´ works had an emphatic educational orientation. These works can be classified in the series of medieval Armenian training manuals.

For verifying the above-mentioned, in the article are shown the examples of characterizations of the teachers given by the students of the Tatev school also there are illustrated samples of prologues and colophons of Grigor Tatevatsi´s published works.

In the given citations are shown that all these materials were used for teaching purposes - as a result, Tatevatsi continuously directs his words to his students, taking into consideration also the readers of further centuries.

***Key words****:* Tatev, Syunik, school, sermon, Hovhan Vorotnetsi, Grigor Tatevatsi, teaching methods, pedagogical manual.

1 **Դավրիժեցի Ա.**, Պատմություն, թարգմ. և աշխատ. **Վ. Առաքելյանի**, Ե., 1988, էջ 592: